



“ԹՈՂ ՏՈՒՔ ԲԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1900

ԹԻՒ 4

ՅՈՎՈՒՆ ԵԶԵՐԲԸ

Յովհաննէս, որ իր Աւետարանը միւս աւետարանիչներէն ետքը գրեց, և անտարակոյս գիտէր անոնց ինչ գրած ըլլալը, չիշեր յարուցեալ Տէրոջ բոլոր երևումները զորոնք կը գրեն անոնք, բայց գեղեցիկ ո՛ճով կը պատմէ մանրամասն պարագաներ որոնք մեզի անծանօթ պիտի մնային եթէ ինք գրած չըլլար զանոնք: Դուկաս կ'ըսէ թէ Պետրոս գերեզման վազեց, բայց Յովհաննէսէ կը հասկընանք թէ ինք Պետրոսի հետ վազեց և անկէ առաջ հասաւ գերեզման: Մարկոս կ'ըսէ թէ Յիսուս «առաջ Մարիամ Մագդաղենացիին երևցաւ», բայց Յովհաննէս է որ կը պատմէ թէ ինչ սրտաշարժ կերպով Մարիամ ճանչցաւ իր Տէրը: Մարկոս և Դուկաս կ'ըսեն թէ Յիսուս ինչպէս երևցաւ



տասնրմէկ աշակերտներուն երբ անոնք ժողովուած էին իրիկունը, բայց միայն Յովհաննէս է որ կ'ընէ այն ազդու պատմութիւնը թէ թովմասի անհաւատութիւնը ինչպէս յաղթուեցաւ: Նաև միայն Յովհաննէս կը պատմէ մեր Տէրոջ հանդիպիր իր եօթը աշակերտներուն և անոնց հետ տեսակցիր Տիրերիայի ծովուն եզերքը: Այդ դէպքը այնքան մեծ ազդեցութիւն ըրած էր Յովհաննէսի վրայ, որ իր Աւետարանը անով վերջացուց: Եւ բոլոր Աւետարաններուն մէջ ո՛ր կը գտնենք աւելի ազդու բան մը որ աւելի պարզ կերպով յայտնէ վարդապետին ներող սէրը, քան Պետրոսի դարձին պատմութիւնը և երեք ան-

գամ կրկնուած հարցումը, «Ձիս կը սիրե՞ս?» Յիսուս Պետրոսի չհարցուց թէ ինչու զիս ուրացար: Չյանդիմանեց Պետրոսը անոր տկարութեան և ստախօտութեանը համար: Գիտէր թէ Պետրոսի խիղճը ամէն օր յանդիմանած էր զանիկա անոր այդ յանցանքներուն համար: Կարևոր բանն այն էր որ Պետրոս վստահ ըլլար թէ ինք կը սիրէր իր վարդապետը և պատրաստ էր ցուցնել իր սէրը՝ արածելով անոնց հողիները որոնց համար Գրիստոս մուռաւ: Եւ Տէրը, որուն ի մեռելոց յարութիւնը կը յիշատակենք այս ամիս, նոյն հարցումը կ'ուզէ մեզի: Կը հարցնէ մեզի թէ «Ձիս կը սիրե՞ս?» կըրնա՞նք ըսել Պետրոսի պէս, «Տէր . . .

դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ:» Եթէ բանն այսպէս է, ուրեմն ցուցնենք մեր սէրը ինչպէս Պետրոս ցուցուց, ընելով ինչ որ կրնանք ուրիշներուն օգտին համար:



ԳԱՌՆՈՒԿԻ ՄԸ ՄԻԶՈՑՈՎ ԱԶԱՏՈՒԱԾ Պատուելի Յունք իր ճամբորդութեան սիրուն պատմութիւններուն մէջ հետեւեալ սրտաշարժ դէպքը կը պատմէ:

1865 Օդոստոսին, զբօսաշրջիկներու խումբի մը մէջ գտնուելով, վերտէճի մայր եկեղեցին այցելել գացինք: Երբ հասանք հոն, եկեղեցիին դուռը գոց գտանք, և պէտք եղաւ սպասել մինչև որ բացուէր դուռը:

Եկեղեցւոյ լուսարարին կինը, խելքը միտքը իր բանջարի պարտէղին խտտերը հանելու տուած էր, ուրիշ բանի չէր նայեր: Բայց վերջապէս կրցանք համոզել զանկա որ եկեղեցիին մեծ բանալին բերէ: Մենք այդ միջոցին ընելու ուրիշ բան չունենալով զնենցինք եկեղեցիին դուրսի կողմի վսեմ ճարտարապետութիւնը: Երբ վեր նայեցանք, եկեղեցւոյն մէկ բարձր աշտարակին կին գագաթը տեսանք գառնուկի մը քարէ արձանը: Դիտեցինք զանկա հետաքրքրութեամբ և զարմանքով: Եւ ահա մեր առաջնորդ կինը ետ դարձաւ, եկեղեցիին մեծ բանալին ձեռքը: Անոր կրնճուտած երեսէն կը հետեցնէինք թէ շատ պատմութիւններ գիտէ: Յուսալով թէ գիտէ այս մայր եկեղեցիին պատմութիւնն ալ, քանդակուած գառը անոր ցուցնելով հարցուցինք թէ ինչու աշտարակին գագաթը դրուած է այդ արձանը: Ասոր վրայ իսկայն կնոջ ճարտասան լեզուն բացուեցաւ և սապէս խօսեցաւ.

«Ահ, պարոններ, ասկէ շատ առաջ կղմինար շարող մը երբ այդ տանիքին վրայ կ'աշխատէր, և քարէ գառին տեղը կը կենար, յանկարծ լաստակերտը (խկէլէ) բռնող չուանը փրթաւ, և մարդը վար ինկաւ այն մեծ բարձրութենէն: Անոր իշնայը տեսնող ամէն մարդ կը կարծէր թէ անոր դիւակը պիտի գտնէին վարը, ինչու որ եկեղեցիին բոլորաթիւ խոշոր և սուր քարերով լեցուն էր, որոնք հոն դիզուած էին շէնքին նորոգութիւններուն գործածուելու համար: Տարակոյս չունէին թէ խեղճ մարդը կտոր կտոր պիտի ըլլար: Եւ ի՞նչ եղաւ անոնց զարմանքը, երբ տեսան որ մարդը ելաւ առանց սկիթուկ մը անգամ ունենալու: Պզտիկ գառ մը հանդարտութեամբ քարերուն մէջտեղերը զրանուող խոտերը կը կրծէր: Մարդը ճիշդ անոր վրայ ինկեր էր: Գառը մարդուն ներքեւ ջախջախուելով մեռեր էր, բայց մարդը աղատուեցաւ: Յետոյ մարդը երբեք հանգիստ չկրցաւ ըլլալ, մինչև որ գտաւ քանդակագործ մը և քարէ գառնուկ մը շինել տուաւ անոր և, ի նշան իր երախտագիտութեան, դրաւ հոն ուր կը տեսնէք հիմա:»

Ես շատ զգածուեցայ այս սրտաշարժ գեպքէն, մանաւանդ անոր համար որ այն գառը կը նմանի ֆրիստոսի, մեր տեղը միթուած Գառին, Աստուծոյ Գառին, որ աշխարհի մեզքը կը վերցնէ: Միւսներուն հետ եկեղեցիին մտայ և տեսայ անոր նկարները և արձանները, անոր ճոխ զարդերը և չքեղ յիշատակարանները, բայց բոլորովին անտարբեր կեցայ անոնց բոլորին առջև: Չկրցի ուրիշ բանի վրայ մտածել, բայց միայն կղմինար շարողին և գառին վրայ, և մանաւանդ այն Գառին վրայ որ մարդոց համար իր կեանքը տուաւ:



ՏՐ. ԲՈՊԸՐԹ ՄՈՐԻՍԸՆ
Այս անձը, որ Չինաստանի առաջին Բողոքական միսիոնարն էր, Անգղիա ծնաւ 1782 Յունուարին: Հնդկաստանի առաջին միսիոնար ֆէրիի պէս աղքատ սղայ մըն էր, և հասարակ դպրոցի կրթութիւն մը ընդունելէն ետքը կառք շինողի մը քով աշխատարուեցաւ: Բայց իր պարապ ժամերը ուսմունքի տուաւ, և նպատակն էր քարոզիչ ըլլալու պատրաստուիլ: Երբ քանրմէկ տարեկան եղաւ, գոյճ մտաւ և հետեւեալ տարին Լոնտոնի Միսիոնարական Ընկերութեան գործին մէջ մտնել առաջարկեց: Երբ տակաւին գոյճին մէջ կը գտնուէր, Չինաստանը սորվեցաւ բնիկ ուսուցիչ մը, և բոլոր միսիոնարներուն, որ անկէ ի վեր այդ երկիրը գացած և հազարաւորներու ֆրիստոնէութեան դառնալուն պատճառ եղած են: Եւ սակայն միսիոնարներն ալ ճամբայ բացողներ են, և հիմ կը դնեն այն ժամանակին երբ երկիրն 300 միլիոնէ աւելի Չինացիները ֆրիստոնէութեան լոյսն ու օրհնութիւնները պիտի ընդունին:

1807ին Գանթոն զրկուեցաւ: Այն ատեն Գանթոն Չինական միակ նաւահանգիստն էր ուր օտարականներուն թոյլ կը արուէր մտնել: 1808ին թարգմանիչ կարգուեցաւ հոն Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան մէկ գործարանին: Բայց իր պաշտօնին հաւատարիմ մնալով պատրաստեց Չինարէնի ֆերականութիւն մը, նաև ըրաւ Նոր Կտակարանի Չինարէն թարգմանութիւն մը: Այս երկու գիրքերն ալ հրատարակուեցան 1814ին: Անոր ամբողջ Աստուածաշնչի թարգմանութիւնը լմնցաւ 1817ին: Հարկաւ այս գործին մէջ բնիկ հմուտ ուսումնականներ օգնեցին անոր: Աւելի վերջերը Չինարէն բառարան մը պատրաստեց, զոր հրատարակեց Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը 1821ին 16,500 ոսկի ծախքով: Այսպէս գրական զարմանալի կեանք մը անցրէնէն ետքը գնաց Անգղիա, ուր երկու տարի կեցաւ և Չինաստան միսիոնար դրկելու մեծ եռանդ արթնցուց հոն: 1826ին Չինաստան վերադառնալով իր ոյժը տուաւ դատարակութիւնը ծաւալելու, և պատրաստելու Աստուածաշնչի Չինարէն մեկնութիւն մը և ուրիշ ֆրիստոնէական գիրքեր և տետրակներ: Մեռաւ 1834ին, երբ տակաւին Չինաստան թոյլ չէր տար որ օտարականները Գանթոնէ անդին ուէ տեղ մը անցնէին: Բայց անոր գործը ճամբան պատրաստեց

բոլոր միսիոնարներուն, որ անկէ ի վեր այդ երկիրը գացած և հազարաւորներու ֆրիստոնէութեան դառնալուն պատճառ եղած են: Եւ սակայն միսիոնարներն ալ ճամբայ բացողներ են, և հիմ կը դնեն այն ժամանակին երբ երկիրն 300 միլիոնէ աւելի Չինացիները ֆրիստոնէութեան լոյսն ու օրհնութիւնները պիտի ընդունին:

ՊԱՏՃԱՌԸ ՓՆՏՈՒՆ
Անխօս կենդանիները, որոնց վրայ կ'իշխենք, միջոց չունին մեզի հասկընելու երբ կը նեղուին կամ կը շարժարուն բանէ մը զոր մենք չենք գիտեր: Ատոր համար պէտք է շատ զգոյշ ըլլալ պատժելու ատեն երբ կ'երև


նայ թէ անոնք կամակոր և ապստամբ են :

Տաք ամառ մը իրիկուան դէմ կաթնափառի սայլ մը քաղաքի մը մէկ փողոցէն վար կ'իջնար : Սայլը քաշող սև ձին շատ տարօրինակ և անսովոր ընթացք մը ունեցաւ : Քանի մը քայլ կ'առնէր և վեր կը ցատկէր . ետքը կ'օրօրուէր կը տատանէր և մէկ կողմ կը դառնար զլուխը անկելով, իբր թէ շատ վախնալով : Սայլավարը բարկացաւ, և սկսաւ իր երկար խորազանով ծեծել ձին : Չին յառաջ կը ցատկէր և նորէն կը կենար և կը ջանար դառնալ : Սայլավարը կեցաւ տան մը առջև ուր դեռատի աղջիկ մը նստած էր

հողի վրայ : Կ'երթանք մեր Հօրը արտունջի սա հին աղաղակով, «Մենք ծառայեցինք Աստուծոյ և պահեցինք անոր հրամանները, բայց ի՞նչ չահեցանք : Անհաւատարիմները մեզմէ աւելի յաջողութիւն կ'ունենան, անփոյթները մեզմէ աւելի երջանիկ են : Ո՞ր են արդարութեան խոստացուած վարձքերը, հնազանդութեան պտուղները :» Բայց պէտք է գիտնալ թէ Աստուծոյ հունձքը կամոնց կամոց կը հասուննայ, և գետնին մէջ ցանուց սերմը իր կատարելութեան կը հասնի գետնէն վեր : Ժամանակ մը, տեղ մը, ինչ որ ցանած ենք, անշուշտ պիտի հընձենք :

Քա բլուրը, որուն վրայ երկու ամբողջութիւններ կան : Սանթիակոյի մէջ կայ համալսարան մը որ հազարէ աւելի ուսանողներ ունի : Կան նաև շատ մը հանրային հրապարակներ ընտիր արձաններով : Որովհետև շատ անգամ գետնաշարժներ կը պատահին, տուններէն շատը մէկ յարկ ունին, և սովորաբար խոշոր բակեր : Հարուստներուն տուններուն բոլորտիքը ընդարձակ գետիներ կան : Այս պատճառով քաղաքը Երոպական նոյնչափ բնակչով երեք քաղաքի տեղ կը գրաւէ :

1863 Դեկտեմբերին ճիզուրիներուն մէկ եկեղեցին այրեցաւ և 1,600 անձինք կորսուեցան բոցերուն մէջ : Եկե-



դրան աստիճաններուն վրայ : Աղջիկը ձիին վրայ նայեցաւ զգուշութիւնով երբ սայլավարը կաթնափառ ետևի դռնէն : Երբ ետ եկաւ, անհանգիստ ձին ոտքերը գետինը զարնել սկսաւ խոտին վրայ : Սայլավարը շատ բարկացած բռնեց սանձէն և սաստիկ մը ցնցեց կենդանին : Այն ատեն աղջիկը մեղմ ձայնով ըսաւ, «Կարծեմ բան մը կը ներդէ ձին անոր աջ կողմին վրայ . նայա՛ծ էք :» «Ոչ,» ըսաւ սայլավարը : Եւ ձիին կուշտը նայեցաւ և զարմանքէն սուրբ տեսնելով որ ձիին կազմածին (թաղքմ) մէկ կողմը պղտիկ փուշ մը մտած էր, զոր քաշեց հանեց : «Իհ, ես չեմ գիտեր, ուրկէ՛ եկեր է այդ, և չեմ զարմանար որ քեզ անհանգիստ ըրաւ, խեղճ կենդանի,» ըսաւ սայլավարը : Շուրջ ձիին և սայլը հեծաւ և կենդանին հանդարտութեամբ սկսաւ քաշել սայլը :

ՍՍՆԹԻԱԿՕ

Քիլի թերևս ամենէն յառաջադէմ երկիրն է Հարաւային Ամերիկայի հանրապետութիւններուն մէջ, և Սանթիակո անոր մայրաքաղաքը գեղեցիկ քաղաք է, կ'ըսեն բոլոր հոն այցելողները : Սանթիակո հիմնարկուեցաւ 1541 ին Վալտիվիայէ, որ փիճարոյի սպաներէն մեկն էր : Հիմա 200,000 բնակիչ ունի : Քաղաքը 1,800 ոտք վեր է ծովուն երեսէն, և 13 հազարամետր հեռու է Ատտան լեռնէն, որոնց ձիւնապատ գագաթները շատ լաւ կը տեսնուին անկէ : Քաղաքին մէջէն կը վազէ Մէփոնոյ գետը : Ասիկա յաճախ կը յորդէ և շատ աւերումներ ըրած է : Ուստի բարձր թումբեր կանգնուած են զանկալ զսպելու համար : Գետին վրայ շատ մը գեղեցիկ կամուրջներ կան : Քաղաքին կեդրոնը կը բարձրանայ Սանթա Լու-

ղեցիին գետին վրայ հիմակուան խորհրդարանը շինուեցաւ :

ՌՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԵՍԷ ԱՌԱՋ

Հիմակուան դպրոցի աշակերտները կրնան մխիթարուիլ իմանալով թէ ասկէ երեք հազար հինգ հարիւր տարի առաջ ալ դպրոցի աշակերտներ կ'աշխատէին կը յոգնէին այնպիսի թուաբանական խնդիրներու վրայ որ հիմա զիրենք շատ կը ձանձրացնեն : Եգիպտոսի այժմու հնախօսական գիւտերուն մէջ կայ պապիրոսէ մաքաղաթ մը սքանչելի վիճակի մէջ և թուականը կը հասնի մինչև Բրիտտոսէ 1,700 տարի առաջ : Այս մագաղաթը երկար վերնագիր մը ունի որ սապէս կը սկսի. «Հրահանդներ՝ թէ ի՞նչպէս ստանալու է գիտութիւն մութ բաներու վրայ :» Ուստի տարակոյս չմնար թէ այդ ժամանակուան Եգիպ-

Փոքրիկ տղի մը տրուեցաւ բոյսի մը սոխը (արմատ) և ըսուեցաւ որ եթէ հողին մէջ դնէ, պիտի բուսնի և յետոյ գեղեցիկ ծաղիկներ պիտի բանայ : Տղան մեծ ուրախութիւնով ըրաւ ինչ որ ըսուեցաւ իրեն, և ծաղիկներ խոստացաւ բոլոր իր բարեկամներուն : Բայց շարաթ մը ետքը իր մօրը եկաւ ցաւազին յուսահատութեամբ : «Սոխը բանի մը օգտակար չէ,» ըսաւ : «Ինձի ըսուեցաւ թէ պիտի բուսնի և գեղեցիկ ծաղիկներ պիտի տայ, բայց երբեք չբուսնիր, վասն զի ամէն օր թաղուած տեղէն կը հանեմ տեսնելու համար :» Մեզմէ շատեր ձիչո այսպէս անհամբեր պարտիզպաններ են հողւոր

տացիները կատարեալ տեղեկութիւն ունէին թուարանութեան սկզբունքներուն վրայ: Բազմաթիւ օրինակներ կը ցուցնեն թէ անոնք՝ ամբողջ թիւերով և կոտորակներով գլխաւոր գործողութիւնները գումարի և բազմապատկութեան միջոցով կը կատարէին: Հանում և բաժանում անձանօթ էին իրենց ներկայ ձևով, և սակայն շիտակ կ'ընէին հաշիւները:

Պապիրոսներուն վրայ արձեւորական հաւասարութիւններ ալ կը գտնուին: Ահա հետագայ հաւասարութիւնը որ եգիպտացի դպրոցականը մեզի կը ծանօթացնէ.

Տասը չափ գարի պիտի բաժնուի տասը անձերու, այն կերպով որ ամէն մէկ անձ իրմէ առջի անձէն մէկ ութերորդ չափ պակաս առնէ: Առաջարկուած ուրիշ օրինակ մըն ալ սա է. եօթը մարդիկ կան, որոնց ամէն մէկը եօթը կատու ունի, ամէն մէկ կատու եօթը մուկ կերած է, ամէն մէկ մուկ եօթը գարի կերած է, և գարիի ամէն մէկ հատը ցանուելով եօթը չափ գարի պիտի տար: Ո՞րչափ գարի կորսուած է ուրեմն:

Պապիրոսը կը պարունակէ նաև մակերեսի հաշիւներ, բոլորակի մը մակերեսի հաշիւը, բոլորակ քառակուսերու փորձեր, և վերջապէս բուրգերու խորանարդ պարունակութիւնը գտնելու հաշիւներ:

ԱՐՏԻՆ ՍԱՌԻԸ

Մարդիկ որ ցուրտէն կը դողան կը սարսուռն, չեն կրնար միշտ հասկնալ սառուին կարևորութիւնն ու արժէքը: Աստուած որ «եղեամբ մոխրի պէս կը ցանէ», և «անոր ցուրտին դէմ ո՞վ կրնայ կենալ» (Մաղ. ճիւղ. 13, 17), իր բոլոր գործերը իմաստութեամբ կ'ընէ: Բայց շատեր աղէկ մը չեն գիտեր թէ գետնին սառելովը ինչպէս կ'արձակուի տունկերուն կերակուրը որ գրեթէ բոլոր հողերուն մէջ կը գտնուի:

Ձուրը երբ կը սառի, իր ծաւալին մէկ ութերորդէն չափ կ'ընդարձակի ահռելի ոյժով, և եթէ ամենազորաւոր ապառաժին մէջ բանտուի և սառի, դանդաղ կը պատուէ: Հողին պզտիկ մասնիկները ուրիշ բան չեն բայց եթէ ժայռի մանր կտորներ, ինչպէս խոշորացոյցը կը ցուցնէ: Եթէ անոնք սառին իրենց խոնաւ եղած ժամանակը, կը փչուին և աւելի կը մանրանան: Այս բանը կը շարունակուի բոլոր ձմեռը արտին կամ պարտէզին ամէն կողմերը ուր սառ կը հասնի: Հողերուն

մեծ մասը կը պարունակեն աւելի կամ պակաս չափով այն տարրերէն որոնց պէտք ունին բոլոր աճող տունկերը կամ հունձքերը. ուստի սառը հողին հետ աղբ կամ պարարտացնող նիւթ մը խառնելու պէս է: Ուրեմն փափաքելի է որ կարելի եղածին չափ շատ հող սառի, և սառը ո՞րչափ աւելի խորունկ ըլլայ, այնչափ աւելի աղէկ է. ինչու որ այն սառն աւելի վար գտնուող հողն ալ վեր կը հանուի, և աւելի հարուստ է տունկերու կերակուրով:

Գիտենք որ գարնան մէջ գետինը կը պատուի, և երբեմն մեծ ճեղքուածներ կը բացուին ճամբաներուն վրայ: Ասոր պատճառն է ջուրը որ ձմեռը ցուրտէն սառած և վեր վերցուցած և շարժած է հողը: Գարնան մէջ կը հալի սառը, և հողը կը փչուի և կտոր կտոր վար կը թափի: Յուրա ձմեռուան սառը կը չորցնէ անպիտան խոտերը և հիւանդութեան սերմերը, և օդը մաքուր և առողջարար կ'ընէ: Բայց ասկէ զատ՝ նաև կ'ազատէ խեղճ երկրագործները բաւական աշխատութենէ, գետինը փորելու, արօրելու և ցանելու պատրաստ ընելու գործին մէջ:

ԿՈՐՍՈՒԱԾ ԵՒ ՓՐԿՈՒԱԾ

Բարեմիտ անհաւատ մը որ երբեք Աստուած աշունչ ունեցած չէր, հատ մը նուէր ընդունեց և իսկոյն սկսաւ կարդալ: «Միրելի կին», ըսաւ, «եթէ այս գիրքը ճշմարիտ է, մենք մտորած ենք»: Գիշ մըն ալ կարդաց, և գոչեց, «Միրելի կին, եթէ այս գիրքը ճշմարիտ է, մենք կորսուած ենք»: Շարունակեց քննել Սուրբ Գիրքը: Աստուծոյ բարի Հողին ճառագայթեց անոր խօսքերուն վրայ և մարդը ուրախութեամբ աղաղակեց, «Միրելի կին, եթէ այս գիրքը ճշմարիտ է, մենք փրկուած ենք»:

Սուրբ Գիրքերը կարող են մարդը իմաստուն ընել փրկուելու համար: Բայց մարդ չփնտուր փրկութիւն մինչև որ ինքզինք կորսուած չլզայ: Աստուածաշունչը նախ կը ցուցնէ մեզի թէ մենք մտորած ու կորսուած ենք: Յետոյ մեզի կը բանայ կենաց շաւիղը և մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ կ'առաջնորդէ:

ԿԱՊԻԿՆԵՐՈՒՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգղերէն լրագրի թղթակից մը հետեւեալ կերպով կը պատմէ Մանչեսթրիի գառագեղին (զազաններու ար-

գելանոց) մէջ գտնուած կապիկներուն վրայ: «Առնք կարգ մը վանդակներու մէջ դրուած էին և իրարմէ կը բաժնուէին բարակ պատով մը: Ամէն մէկ վանդակի առջև կապիկներու կերակուրի աման մը դրուած էր: Օրը քանի մը անգամ կերակուր կը դրուէր ամաններուն մէջ: Այդ կապիկներուն կերակուր ուտելը դիտել շատ զուարճալի էր: Կերակուրը անոնց առջև գտնուած ամաններուն մէջ դրուածին պէս, կապիկները սկսան ուտել, բայց ոչ բուն իրենց ամաններէն, հապա իրենց քով գտնուող կապիկին ամանէն: Ամէն մէկը իր թաթը շեղ կերպով կ'երկնցնէր իր դրացիին ամանին մէջ, որ եթէ կարելի է մաս մը բան յափշտակէր անկէ, և իրենը պահուէր յետոյ ուտուելու համար: Բայց ամէն մէկ կապիկ նոյնը կ'ընէր. և մինչ կապիկ մը ուրիշ մը կերակուրէն կը գողնար, իր մօտ գտնուող միւս կապիկն ալ իրմէ կը գողնար առիթէն օգուտ քաղելով: Եւ երբ ամէն կապիկ կը տեսնէր որ իր կերակուրը կը յափշտակուի ուրիշ մը, կը ջանար խածնել զանիկա, կամ ինքն ալ կ'աշխատէր անոր կերակուրէն յափշտակել: Այսպէս կռիւ կը ծագէր անոնց մէջ և ուստի կերակուրին մեծ մասը գետինը կը թափուէր և կը կորսուէր: Կարճ խօսքով, այս փոխադարձ գողութեան պատճառով բոլոր կապիկները հանգիստ կերակուր չէին կրնար ուտել և արդէն իրենց առջև դրուածէն աւելի քիչ բան կրնային ուտել: Եթէ ամէն մէկը իր ամանին մէջ դրուած կերակուրովը գոհ ըլլար, ամէնն ալ երջանիկ կ'ըլլային: Բայց կապիկները խեղճ անբան կենդանիներ են, և կրնան արդարանալ և գթութիւն չարժել իրենց վրայ իրենց յիմարութեան համար»:

Տղաք և չափահաս անձինք, որ այս կապիկներուն պէս կը վարուին իրարու հետ, քիչ հանգստութիւն կը վաշելին, և աւելի քիչ շահ կ'ունենան, նաև աւելի քիչ գթութեան կը շարժեն ուրիշները երբ իրենց այդ շարվարմունքին պատճառով վրաս կը կրեն:

Տարեկան բաժանորդական արժեքը 100 Լ, կանխիկ, ամէն տեղւոյ ցուցանուի:

Ամերիկայի Միտինարտի Կոլեջի կողմէն

Արտօնատէր Մ. Մ. Մ. Մ.

Տնօրէն—Սմարտիլ ԼՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՎՐՄ ԳՕՑԱՅՑԻ

Ֆինանսները Եղգուշու: Ամերիկան խան